



ԱՐԱՐԱՏ

ԿՐՈՆԱԿԱՆ — ԲԱՐՁՐԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱՎՐ-
ԺԱԿԱՆ, ԱԶԴԱՑԹԻՆ ԵՒ ՊԱՇՅՈՆԱԿԱՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Ի Յ Խ Ե Լ Տ Ա Ր Ի

Հ Ե Մ Ա Ր Մ Ե Շ Ե Ս Ա Վ Ե Ր Ո Ւ Բ Ք

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր 1896 թ.

Մ Ր Ե Ա Զ Ա Ն Պ Ա Ր Ե Վ Ա Ն Ա Վ Ա Կ Ա Ն Ա Վ Ա Կ Ա Ն

« Ժառայք անպիտանց եմք, զոր
պարտեացն առնել՝ արարաթա»

Ինչափիսի՞ դառն հեղնութեամբ են
հնչում այս բառերը մի աշխար-
հում ուր ոչ ոք ծառայ, այլ ամենքը տէր
կամենում են լինել և սակայն իրօք միշտ
ծառայ մնում: Միք առաջն է սուրբ աւետա-
րանի այն պատգամներից մէկը, որոնց վերայ
առհասարակ շատ քիչ են ուշադրութիւն
դարձրել և որոնց իսկական իմաստը սակաւ
քրիստոնեաների համար լուրջ խորհրդածու-

թեան առարկայ է եղել: Այսօր ամենքը քը-
րիստոնէական սիրոյ, ողորմածութեան, անցի-
շաչարութեան՝ մասին խօսում են, և համո-
զուած են, որ լաւ բաներ են դոքա: թէ պէտ
իրական կեանքում սցդ սկզբունքներն անգոր-
ծադրելի են համարուում: բայց գոնէ իրրե-
զադափար կան և արտաքուստ շուք են տա-
լիս կրթուած մարդոց փոխադարձ յարաբե-
րութեան: իսկ թէ աւետարանը իւրաքանչյուր
անձի վերայ առանձնապէս՝ անկախ արտաքին
յարաբերութիւնից, սրբազն և մեծ պար-
տականութիւններ է գնում՝ պարտականու-
թիւն է գնում գործել ամբողջ կեանքում:
անընդհատ, առանց մի ժամ իւրը համար-

լու, հանգստութեան իրաւունք ունենալու՝ զրծել ինչպէս մի ծառայ, որ միայն իւր տիրոջ հրամաններն է կատարում՝ առանց ակրն-կապութեան, առանց ժամէ ժամ՝ կշռելու իւր աշխատութեան արդիւնքը և վարձ սպասելու, ոգեսորուած միայն այն սուրբ զգացմունքով թէ երբ վերջին ժամը կպայ կկարողանայ ասի անապատան ծառայ էի, պարտք կատարեցի, ոչինչ հասուցման արժանի չեմ եզել և չեմ ձգում ուրախ եմ եթէ միայն կարողացար կատարել ինչ որ պարտաւոր էի — այդ արդէն մեծամասնութեան համար անշուշտ նոր և բոլորովին անմատելի սկըզբունք է։ Շատերը պնդել են ընդհակառակն, թէ քրիստոնէութիւնը նորանով է միայն մարդոց բարեգործութեան զրդում, որ ամեն մի արածի համար առատ վարձ է խոստանում, և ոչ ոք նոցանից չի կամեցել լրջօրէն կշռագատել, թէ ինչ է խոստացուած վարձ՝ արքայութիւն, մի բան որ ոչ ուտել, ոչ խմել, ոչ հափնել կարելի է, որ ոչ մէկը չէ մարդկային ցանկութեան առարկաներից և որ ձեռք բերելու համար պահանջուռում է նոյն իսկ զոհել բոլոր այդ ցանկալի առարկաները։ Այս աւետարանը սովորեցնում է, և իւրաքանչիւր քըրիստոնեայ համոզուած պէտք է լինի՝ թէ ոչ մի բարի և արդար գործ առանց վարձատրութեան չի մնայ. բայց նորան գրաւողն ու բաւականութիւն տուողն ոչ թէ այն վարձն է, որ իրեն պէտք է լիացնէ, այլ այն գաղափարը, որ պէտք է յաղթանակէ։ Ինչպէս հրճուռում է մի հասարակ գիւղացի հայրենիքի յաղթութեան լուրն առնելով, թէ այդ յաղթութիւնը իրեն անձնապէս ոչինչ օգուտ չի բերել. այլ գուցէ իմել և իւր սիրեցեալ զաւակն, աւերել է իւր տունը, ոտքի տակ տուել իւր արան ու անդաստան՝ այդպէս հրճուռում և ցնծում է նաև Երկնքի արքայութեան մշակը, երբ արդարագատ հզօր թագաւորի որոտալն է լսում վերեկց, և զգում է, որ չնայած արտաքին բոլոր խարուսիկ երկոյթներին՝ սրբազն արդարութեան մի նոր յաղթանակ կանգնեցաւ, իւր երկնաւոր հայրենիքի փառքն աւելացաւ. զգում է, որ ինքն էս, իւր կոշման ամենանեղ շրջանակի մէջ գոնէ, ամենանուազ չափով գործակից է այդ յաղ-

թութեան և ամենալայն չափով մասնակից այդ ուրախութեան։ Անմահական վարձ, Երկնքի արքայութիւն ու երանութիւն է նորա համար նոյն իսկ այն զգացումը, որ նա իւր պարտքը կատարում է՝ կատարում է Երկնաւոր Ծիրոջ կողմից զրուած պարտքը, և ոչ մի վարձ չի սպասում երկրի իշխաններից և մատուններից։

Սակայն որչափ պակաս է այդպիսի սուրբ պարտաճանաչութեան զգացումն աշխարհում։ Մի ընամնիքի հայր, որ մանկութիւնից ի վեր անդադար աշխատել է՝ կտտարել է սրբութեամբ իւր որդիական պարտքը գէպի իւր ծնօղները, իւր հայրական պարտքը գէպի իւր կինն ու որդիները, աշխարհային զուարձութիւնների ետևելց չի ընկել, կտրել է իւր բերնից, զուրսը ամեն զիկնաքներ տարել է՝ միայն թէ ներսը իւրացինների վիճակն ապահովէի. մի խեղդ այրի կին, որ երիտասարդ հասակում զրկուել է պաշտպան ամուսնուց՝ կրծքին կպցրած սնուցել սեփական մատների աշխատանքով զաւակ է պահել չարքաշ կեանք վարելով, ոչ մի հրապոյրից չգայթակղուելով իւր ծնօղական պարտականութեան հաւատարիմ է մնացել կոպիտ աշխարհի գէմ շարունակ կտուելով կրթել դաստիարակել է իւր մինունարին ու մարդ գարձել՝ գոբա տիպեր ին, որոնց հասկանալ աշխարհը գեռ կարող է, թէ և յաճախ բազգի բերմանը հարստացած մի զաարկապորտի աւելի է գնահատում, աններելի միջոցներով փառք ու պատուի հասած մի սրիկայի առաջ աւելի է խոնարհում։ Սեփական շահը շատ տարբեր չէ մերձաւոր արիւնակիցների շահից, և որ մէկը նուիրէ իւր անձը իւրայնոց օգտին՝ այդ բնական բան է համարուեւմ։ Բայց թէ գործել կարելի է առանց որևէ շահ ի նկատի ունենալու, թէ կդանուին հասարակական գործիչների, քրիստոնեայ մարդիկի որոնք ծառայում են հասարակաց օգտին, ծառայում են երկնաւոր Ծիրոջ, ոչ թէ նորա համար, որ կամենում են աշխարհը աեսնէ ու փառարանէ, որ հատուցումն են սպասում սյս կամ հանդերձեալ կեանքում, այլ որ իրենց ծանաչած պարտքի, վսիմ գաղափարի անհրաժեշտ պահանջն է այդ՝ ահա այսաեղ է, որ սովորական մարդն

իրեն ուղիղ հաշիս տալ չէ կարող. Կորան
թուում է միշտ թէ զիմացինը կամ յիմարի
մէկն է ու սեփական օգուածք չի հասկանում
կամ որեւ է խարդախութիւն ունի մտքում, որ
արտաքին փայլով ծածկել է կամենում ուրիշնե-
րի աջքից

ԱՇ, ի՞նչ կլիներ, եթէ, ամենքը կարու-
ղանային ըմբռնել այն երանական զգացումը,
որ գաղափարի մարդը՝ քրիստոնեայն, ունե-
նում է, երբ գիտէ, թէ մի լաւ բան է արել՝
աշխարհի աչքից ծածուկ, աշխարհի համար
անհանու բայց իրօք գնահատելի, գեղեցիկ
բան, այնպէս որ պարզերես գեպի վեր նայել
և՝ Անպիտան ծառայ եմ ոպաքս կատարեցի,
ասել պէտք է համարձակուի: Եւ ի՞նչ կլիներ
աշխարհը, եթէ նորա մէջ այդպիսի գաղափարի
մարդիկ չգտնուեին, եթէ չգտնուեին քրիս-
տոնեաներ, որոնք իրենց Երկնաւոր Վարդա-
պետի նման պատրաստ լինեին իրենց անձը
և վրայըների համար գնելու, ամեն բանից ա-
ռաջ Երկնքի արքայութիւն ինդրելու, Եր-
կնքի արքայութեան գործն առաջ առնելու
համազուած լինելով, որ մնացածը ինքն իրեն
կզայ: Չահամնդիր, անձնասեր մարդկու-
թեան մէջ այդպիսիները անհաշտ տարրերին ի-
րար հետ կապող օգակներ են, սառն անջրպետ-
ները լեցնող ջերմութիւն, նոցա ներկայութիւ-
նը յաճախ զգալի չէ, բայց շատ զգալի է բա-
ցակայութիւնը. նոցա հաւատն է, նոցա ան-
կեղծ ոգեսորութիւնը, որ սարերը շարժում է,
անգունքները ծածկում և գաղափարական
մօմ կեանքի հոսանքը բառած տանում:

卷之三

rusophony

四二四

ԵՐԿՐՈՎԻ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԳԱՂ ԱՓԱՐԸ:

Ով աւետարանի բովանդակութեան ի մօ-
այ ծանօթ է՝ նկատած կինի անշուշտ, որ
Քրիստոսի քարոզութեան զիսաւ որ առարկան
կազմում է Երկնքի արքայութեան գաղափա-
րը և այդ գաղափարի շուրջ են պատռում
զիթէ Եսրա բոլոր խօսքերը։ Արդէն Յով-

Հաննեկս Մկրտիչը Նորանից առաջ Երկնքի
արքայութեան մօտ լինելը քարողել էր, և
երբ Նա մկրտութիւնից յիշոյ իբրև քարողիչ
հրապարակ է ենուում՝ կրկին առաջին խօսքն
է. «Ազագիսարեցէք, զի մերձեալ է արքայու-
թիւն Երկնից» (Մատթ. Դ. 14). ամբողջ լե-
րան քարոզը այդ արքայութեան ճանապարհ-
ները ցցց տալու համար է ապուած։ Քրիս-
տոսի առակների մեծագոյն մասը արքայու-
թեան գաղտփարը բացատրելու համար է։
Արդ, ինչ էր կամենում հասկացնել Նա
Երկնքի արքայութիւն ասելով, այդ հիմնական
գաղտփարի բացատրութիւնից կախուած է
ամբողջ աւետարանի ուղիղ րմբանում։

Նախ և առաջ պարզ է, որ Ջրիստոս
Աստուծոյ արքայութեան մասին խօսում է
իրեւ մի ձանօթ գաղափարի մասին. երբ Նա-
տում մ էր՝ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել
է, ունկնդիրներն անշուշտ մի բան հասկա-
նում էին: Յիլրաւի, եթէ չին կատակարանը
ձեռք առնենք՝ կտեսնենք, որ այդ գաղափարն
անձանօթ չէ այնտեղ: Երբ պատերազմի դաշ-
տից յաղթութեամբ վերագարձած գեղէնին
ժողովուրդն առաջարկում էր թագաւորել իւր
վերայ՝ Նա մերժեց առարկերով, թէ Աստուծուն
է հսրայէլի թագաւորը, և երբ ժողովուրդը
Սամուելից թագաւոր էր պահանջում՝ սորտն
ևս ամբարշտութիւն է թուում այդ միտքը:
մավսիսական օրէնքը ծայրէ ի ծայր այն հայ-
եացքն է պաշապանում թէ հսրայէլի ժո-
ղովուրդը Աստուծոյ սեփականութիւնն է,
Նորան միայն իրրեւ բացարձակ տէր և իշխան
պէտք է նկատէ, Նորա պատուէրներով առաջ-
նորդուի թէ պատերազմի և թէ խաղաղու-
թեան միջոցին, կազմէ ուրեմն մի թագաւո-
րութիւն, որի մէջ Աստուծոյ կամքն է բա-
ցարձակ իշխում: Արդարեւ եղան հսրայէլի երկ-
րաւոր թագաւորներ ևս բայց նորա համա-
րուում էին միայն Երկնաւորի ներկայացու-
ցից, Նորա իշխանութիւնը գործադրողները,
իրրեւ Տիրոջ օծեալներ նքան ընդունում էին
Տիրոջ կողմից արդարութեան և իմաստու-
առութեան հոգի, արդարութեամբ և իմաս-
տութեամբ իշխանութիւն վարելու, սակայն
երբէք չպէտք է կորցնէին այն գիտակցու-
թիւնը, թէ այդ իշխանութիւնը իրենց էւ